



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

« 30 » հունվարի 2019 թ.

N 26 - Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՀԱԾՎԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի
հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ, Կետի 20-րդ
ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) պետական ոչ առևտրային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի օրինակելի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի օրինակելի ձևի լրացման պահանջները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ա. ԶԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԶԵՎ

ՊԵՏԱԿԱՆ ՌԶ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԻ

« Հ Ա Ս Ա Ս ՈՒ Մ Ե Մ »

ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԼԽԱՎՈՐ
ՖԻՆԱՆՍԻՍ

(ստորագրություն)

(Ա.Հ.Ա.)

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

ՊԵՏԱԿԱՆ ՌԶ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 20___ ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

- Կազմակերպության անվանումը _____ 5. ՀՀ պետական կառավարման լիազորված մարմնի անվանումը _____
- ՀՎՀՀ _____ 6. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ծածկագիր/բաժին, խումբ _____
- Փոստային հասցեն _____ 7. Չափի միավորը՝ հազար դրամ _____
- Կազմակերպության տեղաբաշխման մարզի կոդն ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման _____

1123600	թյուններ - Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	423600							
1123700	- Ներկայացուցչական ծախսեր	423700							
1123800	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423900							
1124000	2.4. Այլ մանագիտական ծառայությունների ձեռքբերում	x							
1124100	- Մանագիտական ծառայություններ	424100							
1125000	2.5. Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	x							
1125100	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425100							
1125200	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425200							
1126000	2.6. Նյութեր (սպիրանքներ) այլ թվում	x							
1126100	- Գրասենյակային նյութեր և հագուստ	426100							
1126200	- Գյուղատնտեսական ապրանքներ	426200							
1126300	- Վերապատրաստման և ուսուցման նյութեր (աշխատողների զարգացման)	426300							
1126400	- Տրանսպորտային նյութեր	426400							
1126500	- Երջակա միջավայրի պաշտպանության և գիտական նյութեր	426500							
1126600	- Առողջապահական և լսողական նյութեր	426600							
1126700	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	426700							
1126800	- Հատուկ նպատակային այլ նյութեր	426900							

Կոդ	Նկարագրություն (տող 1000000 - 2000000)																		
5000000	IV. Ղեկավարման և կառավարման ծախսեր																		
5124000	2.4. Կազմակերպության ելքերի ֆինանսավորմանն ուղղվող տարեկան միջոցներ	x																	
5125000	2.5. Կազմակերպության հաշվից (ազատ մնացորդ) համապատասխան բյուջե փոխանցվող միջոցներ, այդ թվում	x																	
5125100	2.5.1 սեփական բյուջե																		
5125200	2.5.2 համայնքների բյուջեներ																		
5126000	2.6. Հաշվետու ժամանակա-շրջանում կազմակերպության հաշվի ազատ միջոցներ	x																	

_____ 20__ թ.

_____ (Ա.Հ.Ա.)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՕՐԵՆ

_____ (Ա.Հ.Ա.)

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ

ԼՐԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ՌԶ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԻ

Այս հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի օրինակելի ձևը» (այսուհետ՝ Օրինակելի ձև) լրացվում է պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից, և նախատեսված է վերջինիս կողմից ֆինանսատնտեսական գործունեության դրամական միջոցների գոյացման աղբյուրների և դրանց հաշվին իրականացվող ելքերի (ծախսերի) տարեկան նախահաշվի (այսուհետ՝ Նախահաշիվ) կազմման և հաստատման համար: Օրինակելի ձևը լրացվում է հետևյալ կերպ.

1. Օրինակելի ձևի տիտղոսային մասի 1-ին կետում լրացվում է կազմակերպության անվանումը:
2. Օրինակելի ձևի տիտղոսային մասի 2-րդ կետում լրացվում է կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը:
3. Օրինակելի ձևի տիտղոսային մասի 3-րդ կետում լրացվում է կազմակերպության իրավաբանական հասցեն:
4. Օրինակելի ձևի տիտղոսային մասի 4-րդ կետում լրացվում է կազմակերպության տեղաբաշխման մարզի կոդն՝ ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման:
5. Օրինակելի ձևի տիտղոսային մասի 5-րդ կետում լրացվում է ՀՀ պետական կառավարման լիազորված մարմնի անվանումը:
6. Օրինակելի ձևի տիտղոսային մասի 6-րդ կետում լրացվում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանով հաստատված՝ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ծածկագիրը N 11 հավելվածի տարրերին համապատասխան՝ բաժին (2 նիշ), խումբ (2 նիշ):
7. Նախահաշիվը կազմելիս Օրինակելի ձևի աղյուսակի յուրաքանչյուր տողին համապատասխանող՝ «Ա» սյունակում ամրագրված համարը փոփոխման ենթակա չէ:
8. Նախահաշիվը կազմելիս թույլատրվում է այդ նախահաշվում չներկայացնել Օրինակելի ձևի աղյուսակի այն տողերը, որոնցում արտացոլված «Բ» սյունակի տարրերի գծով համապատասխան գումարներ նախատեսված չեն:
9. Օրինակելի ձևի աղյուսակի «Բ» և «Գ» սյունակներում նշվող բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերը համապատասխանում են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանով հաստատված NN 5, 6, 7, 8, 9 և 10 հավելվածների տնտեսագիտական ծածկագրերին և դասակարգման տարրերի անվանումներին (վինչև սինթետիկ հաշիվ) և աղյուսակը լրացնողի կողմից փոփոխման ենթակա չեն, իսկ դրանց համապատասխանող գումարները լրացվում են աղյուսակի 1-ից 12-րդ սյունակներում:
10. Հաստատված նախահաշիվը համարվում է տվյալ ժամանակահատվածի նախահաշիվ և լրացվում է 3-րդ, 6-րդ, 9-րդ և 12-րդ սյունակներում, իսկ 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ սյունակները չեն լրացվում:
11. Ելնելով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում, նախահաշվում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունից, նախահաշվի աղյուսակի
ա. 1-ին, 4-րդ, 7-րդ և 10-րդ սյունակներում ներկայացվում են նախքան տվյալ փոփոխությունները 3-րդ, 6-րդ, 9-րդ և 12-րդ սյունակներում առկա համապատասխան ցուցանիշները,

- բ. 2-րդ, 5-րդ, 8-րդ և 11-րդ սյունակներում ներկայացվում են կատարվելիք փոփոխությունները.
- գ. 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ, 7-րդ և 8-րդ, 10-րդ և 11-րդ սյունակներում բերված ցուցանիշների հանրագումարը ներկայացվում է 3-րդ, 6-րդ, 9-րդ և 12-րդ սյունակներում, որպես տվյալ ժամանակահատվածի համար ճշտված նախահաշիվ:
12. Օրինակելի ձևի աղյուսակի 1311000, 1312000, 1313000 և 1314000 տողերում ցուցանիշները լրացվում են բացասական նշանով:
13. Օրինակելի ձևի աղյուսակի 3000000 տողում ներկայացվում է դեֆիցիտը կամ հավելուրդը, որը ընդամենը ծախսերի և ընթացիկ եկամուտների տարբերությունն է (1000000-2000000):
14. Օրինակելի ձևի աղյուսակի 5000000 տողում ներկայացվում են դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները:
15. Օրինակելի ձևի աղյուսակի 5124000 տողում ներկայացվում են կազմակերպության ելքերի ֆինանսավորմանն ուղղվող տարեսկզբի միջոցները: Եթե տվյալ բյուջետային տարում գումարների մի մասը վերադարձվում է (կամ նախատեսվում է, որ պետք է վերադարձվի) նույն հաշվին դրանց հատկացման բյուջետային տարվան հաջորդող բյուջետային տարում, ապա այդ վերադարձվող գումարները՝ նոր նախահաշվով նախատեսվող ելքերի ֆինանսավորմանն ուղղվող չափով արտացոլվում են համապատասխան տողում՝ դրական նշանով:
16. Օրինակելի ձևի աղյուսակի 5125000 տողում ներկայացվում են կազմակերպության հաշվից համապատասխան բյուջե փոխանցվող միջոցները (5125100+5125200), որը լրացվում է համապատասխան բյուջե փոխանցելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ բացասական նշանով:
17. Օրինակելի ձևի աղյուսակի 5126000 տողում ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության հաշվի ազատ միջոցները՝ բացասական նշանով:
18. Պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվները էլեկտրոնային թվային ստորագրությամբ ներկայացվելու կամ ինքնաշխատ եղանակով զանապետարանում գործող CLIENT-TREASURY-ի համակարգ մուտքագրելու դեպքում հաստատվում են լիազոր պետական մարմնի գլխավոր ֆինանսիստի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ միայն նախահաշվով հաստատված տարեկան ցուցանիշները:
19. Նախահաշվի բյուջետային ծախսերի դասակարգման տնտեսագիտական ծածկագրի խմբի մակարդակով (<< ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի թիվ 5 հրաման) նախատեսված ցուցանիշների փոփոխությունը հաստատվում է պետական կառավարման լիազորված մարմնի կողմից, իսկ սինթետիկ մակարդակով՝ կազմակերպության կողմից: